




# ՊԱՏՎԱՍՏՎԵԼԸ

## ԵՐԲԵ ԱՅՍՔԱԼ ՅԵՇՏ ՉԻ ԵՂԵԼ

COVID-19-ի Դեմ Պատվաստման Ժամադրություններն անվճար են և հասանելի են 12 տարեկան և բարձր տարիքի բոլոր անձանց համար, որոնք ապրում և աշխատում են Լոս Անջելեսի Շրջանում: Չի պահանջվում բժշկական ապահովագրություն և ներգաղթի կարգավիճակի վերաբերյալ հարցեր չեն տրվելու:

### Ինչպես Պատվաստվել Լոս Անջելեսի Շրջանում

1. Պատվաստվելու համար աշխատանքային ժամերին մոտեցեք Շրջանի կողմից ղեկավարվող պատվաստման վայր: Գրանցման ժամանակացույցը հասանելի է միայն պատվաստանյութերի պաշարների առկայության դեպքում:
2. Ամրագրեք ժամադրություն ձեր կամ ուրիշ անձի համար MyTurn.ca.gov կայքում: Կհաստատվեն ձեր առաջին և երկրորդ դեղաչափերի համար ժամադրությունները:



### Պատվաստվելու համար ձեզնից պահանջվելու է ներկայացնել՝

1. Տարիքի Ապացույց Հանդիսացող Փաստաթուղթ
2. 12-17 տարեկան անչափահաս անձանց համար միայն - Համաձայնության Ձև

Պատվաստվելու համար ձեզնից չի պահանջվելու ներկայացնել կառավարության կողմից տրված ID, ինչպես նաև պարտադիր չէ լինել Միացյալ Նահանգների քաղաքացի: Անհրաժեշտ փաստաթղթերը կարող եք տեսնել [այստեղ](#):



### Եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի մեծ՝

- Փնտրեք պատվաստման այնպիսի վայրեր, որոնք տրամադրում են Pfizer պատվաստանյութը, քանի որ այն միակ պատվաստանյութն է, որով թույլատրվում է պատվաստել 12-ից 17 տարեկան անձանց: Ձեզ կարող են մերժել պատվաստել, եթե գնաք պատվաստման այնպիսի վայր, որը չի տրամադրում Pfizer պատվաստանյութ:
- Pfizer պատվաստանյութով պատվաստվելիս եկեք ձեր ծնողի կամ խնամակալի հետ: 16 և 17 տարեկաններին, հնարավորության դեպքում, պետք է ուղեկցեն իրենց ծնողը կամ խնամակալը: 12-ից 15 տարեկաններին պետք է ուղեկցեն իրենց ծնողը, օրինական խնամակալը կամ պատասխանատու չափահաս անձը:

**\*Ծանոթություն.** Տվյալ պահին 12 տարեկանից փոքր անձինք չեն կարող պատվաստվել:

